ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

**«ԵՔ-ԾՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝** Մ. Հայրապետյան
**Հանձնաժողովի անդամներ՝** Ք. Համբարձումյան, Ռ. Կարապետյան, Մ. Խալափյան, Լ. Անտոնյան
**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Զալինյան

## 1. Հայտերի բացման մասին

**1.1. Հայտերի բացման.**

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ

**-օրը՝** 1 նոյեմբերի 2016թ.

**-ժամը՝** 09:30

**1.2** Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովը 31.10.2016թ-ին կրկնակի անգամ ուսումնասիրելով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների թղթային և էլեկտրոնային փաստաթղթերը, արձանագրեց, որ **«ԴԵԱԳԱ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հավելվածներում, ինչպես նաև **Հավելված 4-ում /գնային առաջարկ/ էլ. ստորագրության հետ կապված համակարգը թերություն է արձանագրում**, ուստի որոշեց առաջնորդվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դրույթներով հարցում կատարել ՀՀ տարածքում էլ. ստորագրությունը սպասարկող **«Էկենգ» ՓԲԸ**-ին, վերջինիս տրամադրելով «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածների էլեկտրոնային և թղթային տարբերակները: Նույն օրը «Էկենգ» ՓԲԸ-ի կողմից ստացվել է պատասխան, համաձայն որի «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելվածները՝ ինչպես նաև **Հավելված 4-ը, չի կարող համարվել վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ**: Հիմք ընդունելով ստացված գրությունը /արձանագրությանը կցվում է/, **գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի հայտը**՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի, ըստ որի գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պայմանների նկատմամբ, շտկման ենթակա չեն:
Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

**1.3** Ընդունելի ի գիտություն, որ **31.10.2016թ-ին «Նորք-7» ՍՊԸ-ին և «Ֆոտոն» ՍՊԸ-ին** armeps համակարգի միջոցով ծանուցումներ են ուղարկվել ընթացակարգի համակարգողի կողմից՝ հայտերում առկա ոչ գնային պայմաններում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով: Նույն օրը վերը նշված մասնակիցները անհամապատասխանությունները շտկել են և հետագա գնահատման համար մասնակիցների հայտերը համարվել են բավարար:
Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

**1.4 Գնային առաջարկները**

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄ | ՆՈՐՔ-7 ՍՊԸ<br>ՎԻ ԷՄ ՋԻ և ՈՐԴԻՆԵՐ ԲԲԸ<br>/կոնսորցիում/ | ԴԵԱԳԱ ՍՊԸ | Ա/Ձ ՀՐԱՅՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ | ՖՈՏՈՆ ՍՊԸ | ԿԱԶՄ. ԱՆՎ |
|---|---|---|---|---|---|---|
| | | + | + | - | + | ԵՏՄ |
| | | + | + | + | + | ԱԱՀ-ով |
| 1 | ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹ | **227 827 248,0** | ~~215 160 000,0~~ | 248 021 026,8 | 312 399 484,0 | ՆՈՐՔ-7 ՍՊԸ<br>ՎԻ ԷՄ ՋԻ և ՈՐԴԻՆԵՐ ԲԲԸ<br>/կոնսորցիում/ |

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

**1.5 Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից | | | | 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից | 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մասնակցի անուն | Պայմ. գին | ԵՏՄ | ԱԱՀ | | |
| 1. | ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹ | ՆՈՐՔ-7 ՍՊԸ<br><br>ՎԻ ԷՄ ՋԻ և ՈՐԴԻՆԵՐ ԲԲԸ /կոնսորցիում/ | 227 827 248,0 | + | + | Ա/Ձ ՀՐԱՅՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ | ՖՈՏՈՆ ՍՊԸ |

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

**1.6.** Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) միայն 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման համար:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Մ. Հայրապետյան |
| Անդամներ՝ | | Ք. Համբարձումյան |
| | | Ռ. Կարապետյան |
| | | Մ. Խալափյան |
| | | Լ. Անտոնյան |
| Համակարգող՝ | | Մ. Ջալինյան |

ekeng

Հայաստան, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0010, Armenia
+374 60 464501, 464502
info@ekeng.am
www.ekeng.am

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի գնումների վարչության պետ
պարոն Գ. Չթրյանին

Հարգելի պարոն Չթրյան,

Մենք բարեհաջող ստացել ենք Ձեր փաստաթուղթը: Կից ներկայացնում ենք մեր կողմից կատարված եզրակացությունը:

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ուղարկված՝ Գնի առաջարկ, ՀԱՎԵԼՎԱԾ 4.pdf փաստաթուղթը ներառում է ԳԵՎՈՐԳ ՂԱՄԱԲՈՂԼՅԱՆԻ՝ ՀԾՀ 2905920602, ՈՉ ՎԱՎԵՐ էլեկտրոնային ստորագրությունը և հետևաբար սույն փաստաթուղթը չի կարող համարվել վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ չի հաջողվել բացել փաստաթղթին կցված էլեկտրոնային ստորագրության հավաստագրերը և ստուգել էլեկտրոնային ստորագրության դարանում ներառված բոլոր անհրաժեշտ մանրամասները, այն է՝ էլեկտրոնային ստորագրության սերիա համար, հանրային բանալի և տեխնիկական այլ մանրամասներ:

Որպես ապացույց, կից ներկայացնում ենք փաստաթղթում առկա սխալի հաղորդագրության, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրության ՈՉ ԱԿՏԻՎ (Show Certificate) դարանի արտահանված տարբերակները:

Հարգանքով՝

Արմինե Աբելյան

Հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավար

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների

Ներդրման Գրասենյակ ՓԲԸ

e-mail: cssupport@ekeng.am
Հեռ՝ 374 060 460 405 (ext 301)

www.ekeng.am